ՔՀԿ ՉԱՓԻՉԻ ՄԱՍԻՆ

cso meter

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

European Center for Not-for-Profit Law

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ հակակոռուպցիոն կենտրոն

«ՔՀԿ չափիչը» գործիք է, որը մշակվել է Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգին աջակցելու նպատակով: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: 2019-ից 2022 թվականների մոնիտորինգային հետազոտության արդյունքում «ՔՀԿ չափիչ» ծրագրի գործընկերները վերլուծել են ՔՀԿ միջավայրը վեց երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Հայաստանում «ՔՀԿ չափիչ» ծրագիրը իրականացնում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը:

ՔՀԿ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՆ ԸՍՏ ՁԵԿՈՒՅՑԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ (2021-2022 ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ)

Ոլորտ	Արձանագրված միտումներ	Ընդհանուր		Իրավական		Գործնական	
		2021	2022	2021	2022	2021	2022
Միավորումների ազատություն	ՔՀԿ-ները էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: Առաջարկվում է ավելի մեծ ճկունություն ապահովել գրանցման նմուշային ձևերից օգտվելիս, առցանց գրանցման հնարավորություն ստեղծել ՔՀԿ-ների համար:	5.7	5.7	5.8	5.8	5.6	5.6
Հավասար վերաբերմունք	Գրանցման և հարկման օրենսդրությունն ավելի նպաստավոր է առևտրային կազմակերպությունների, քան ՔՀԿ-ների համար:	4.9	4.9	5	5	4.8	4.8
Ֆինանսավորման մատչելիություն	ՔՀԿ-ները կարող են ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից: Աուդիտի պահանջը որոշ խնդիրներ է ստեղծում ՔՀԿ-ների համար:	5.4	5.4	5.8	5.8	4.9	4.9
Խաղաղ հավաքների ազատություն	Արձանագրվել են հավաքների անհիմն ցրման, ոստիկանության կողմից ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, իրավախախտ ոստիկանական ծառայողների նկատմամբ արդյունավետ պատժամիջոցներ չեն կիրառվել:	5.3	5.3	5.7	5.7	4.9	4.9
Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	Հանրության մասնակցության համար ստեղծված ինստիտուցիոնալ մի շարք մեխանիզմներ կան, սակայն գործնականում դրանցից ոչ բոլորն են լիարժեք ու արդյունավետ գործում: Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը և ԲԿԳ 2022-2024 նոր գործողությունների ծրագիրը ներառում են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են հանրային մասնակցության բարելավմանը:	4.8	4.8	5.3	5.3	4.3	4.3
Խոսքի ազատություն	Կառավարությունը համաձայնության հուշագիր է ստորագրել ոլորտային ՔՀԿ-ների հետ՝ պարտավորվելով համատեղ մշակել ԶԼՄ-ների բարեփոխումների շրջանակ, ծանր վիրավորանքը քրեականացնելու մասին վիճահարույց իրավական դրույթը չեղարկվել է, իսկ նոր քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսել ատելության խոսքի համար: Գործնական խնդիրները կապված են ապատեղեկատվության և ատելության խոսքի, լրագրողների վրա հարձակումների դեպքերի և զրպարտության ու վիրավորանքի հիմքով դատական հայցերի հետ:	4.7	4.8	5.1	5.2	4.3	4.3
Մասնավոր կյանքի ազատություն	Ոլորտի հիմնական խնդիրներն են տվյալների արտահոսքի հետաքննության վերաբերյալ հաշվետվողականության պակասը, ինչպես նաև հսկողության գործողությունների իրավաչափության վերահսկողության բացակայությունը: 2022 թվականին պետական ծառայողների անձնական տվյալների կառավարման վերաբերյալ կարողությունների զարգացման միջոցառումներ են իրականացվել, ինչպես նաև տվյալների արտահոսքի ավելի քիչ դեպքեր են գրանցվել:	4.8	4.9	5.8	5.8	3.8	3.9
Պետության կողմից պաշտպանության պարտականություն	ՔՀԿ-ները կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել բնապահպանական խնդիրների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում, սակայն բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը սահմանափակված է: Զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ները ենթարկվում են ճնշումների և սպառնալիքների: Մի քանի կազմակերպությունների և ակտիվիստների դեմ երրորդ անձանց կողմից դատական հայցեր են ներկայացվել, ինչը բացասաբար է անդրադարձել նրանց գործունեության և ռեսուրսների վրա: Իրական շահառուների հայտարարագրման պահանջը ուժի մեջ է մտել ոչ առևտրային կազմակերպությունների համար, սակայն ոչ բոլորն են տեղյակ այս պահանջի մասին, իսկ իրական շահառուների սահմանումը շփոթեցնող է ՔՀԿ-ների համար:	4.7	***4.6***	5.3	5.3	4.0	***3.9***

Պետական աջակցություն	ՔՀԿ-ների և նվիրատուների համար հարկային արտոնությունները քիչ են, իսկ բարեգործական ծրագրերի դեպքում հարկերից ազատման ընթացակարգը երկարատև է ու բարդ: Դրամաշնորհային մրցույթների առցանց հարթակը հնարավորություն է տալիս դիմել առցանց եղանակով, սակայն շատ ՔՀԿ-ներ գտնում են, որ այս հարթակը բարդ է և տեխնիկական խնդիրներ ունի:	4.1	4.1	4.2	4.2	3.9	3.9
Պետություն–ՔՀԿ համագործակցություն	Պետություն-ՔՀԿ համագործակցության և կամ ՔՀԿ դաշտի զարգացման վերաբերյալ ռազմավարական փաստաթուղթ չկա: Հասարակական խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների գործառնությունն ու արդյունավետությունը կախված են տվյալ գերատեսչության քաղաքական կամքից:	4.0	4.0	4.3	4.3	3.6	3.6
Թվային իրավունքներ	Համացանցը լայնորեն հասանելի է երկրում, իսկ պետության կողմից ստեղծված թվային հարթակները նպաստում են տեղեկատվության հասանելիությանը: Առցանց հարթակներում խնդիրները կապված են լայնատարած ապատեղեկատվության և ատելության խոսքի հետ, այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը բավարար չեն, թեև ՔՀԿ-ները փաստերի ստուգման մի շարք նախաձեռնություններ են սկսել: Որպես նոր զարգացող ոլորտ՝ գնահատականը բարելավվել է վերահաշվարկի արդյունքում:	4.2	4.5	4.9	4.9	3.5	4
Երկրի ընդհանուր գնահատական		***4.8***	***4.8***	***5.2***	***5.2***	***4.3***	***4.4***

** Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 բալ, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճան անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):*

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԱՀ-ի շեմի համար հաշվարկվող շրջանառության մեջ ներառված եկամուտների տեսակի հստակեցում՝ ներառելով միայն ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը
- Մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմների լիարժեք օգտագործում, բովանդակալից մասնակցության ապահովում
- Խորհրդարանում հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներ և ՔՀԿ-ների ներգրավում իրավական նախագծերի վաղ փուլերում
- Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում ՔՀԿ մասնակցության ընդլայնում՝ համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով
- ՁԼՄ-ների հետ կապված օրենսդրության վերաբերյալ նախնական փուլերում խորհրդակցելու հանձնառության իրականացում և ՁԼՄ-ների բարեփոխումների համակարգային մոտեցման կիրառում՝ հիմնված քաղաքացիական հասարակության հետ համատեղ մշակված հայեցակարգի վրա:
- ՔՀԿ նպատակների շրջանակում հանրային շահերը դատարանում ներկայացնելու հնարավորության ապահովում՝ օրենսդրորեն և գործնականում
- Պատշաճ պաշտպանություն ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և ապատեղեկատվությունից, ճնշելու նպատակով նախաձեռնվող դատական հայցերից
- ՔՀԿ-ների կողմից իրական շահառուների գրանցման նոր պահանջի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ և ուղեցույցներ
- ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայրի ապահովում
- ՔՀԿ հատվածի զարգացման համապարփակ ռազմավարության ընդունում՝ ավելի բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով

«ՔՀԿ չափիչ Հայաստան-2022» հետազոտության զեկույցին կարող եք ծանոթանալ ԹԻՀԿ կայքի հրապարակումներ բաժնում:
«ՔՀԿ չափիչ» ծրագրի նյութերին, տարածաշրջանային և մյուս երկրների զեկույցներին կարող եք ծանոթանալ ծրագրի կայքում՝ www.csometer.info հասցեով:

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միայն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը», և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը: «ՔՀԿ չափիչ՝ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց» ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի», Ադրբեջանում «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ-ի, Վրաստանում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի», Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում՝ «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնի» (UCIPR) կողմից: